



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«05» Տպիս 2022թ.

ՀՐԱՄԱՆ N 210-ՇԻ

«ՅՈՒՏԷՅՐ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՈՒՆ» ԲԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «2» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավիացիայի մասին» օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով, «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով և Հայաստանի Հանրապետության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 1 հավելվածի 19-րդ կետով և հիմք ընդունելով «Յուտեյր» ավիաընկերություն» ԲԲ ընկերության 2022 թվականի ապրիլի 26-ի հայտը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Յուտեյր» Ավիաընկերություն» ԲԲ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Տյումեն/USTR/-Երևան/UDYZ/-Տյումեն/USTR/ երթուղով՝ 2022 թվականի մայիսի 22-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 23-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ, Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն:

2. Սահմանել, որ Ընկերությունը օդային տրասպորտի միջազգային ասիցիցացիայի (ԻԱՏԱ) ամառային ժամանակահատվածում՝ 2022 թվականի մայիսի 22-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 23-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ Երևան/UDYZ/-Տյումեն/USTR/ ուղղությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացմամբ բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին, և հետևաբար սույն կետում նշված ուղղությամբ մեկնող ուղևորների վրա տարածվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի «գ» ենթակետով սահմանված արտոնությունը:

3. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվության տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

4. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պարտականությունները կատարողին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվությունների հանձնումն Ընկերությանը:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

5/5/2022

X 

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 067/2022

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ,
ՏԱՐԱԾՔԻՑ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՄ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 067/2022
TO THE FOREIGN OPERATOR FOR SCHEDULED AIR
SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

Օդանավ շահագործողը Aircraft Operator	«Յուաեյր» Ավիաընկերություն» ԲԲԸ "UtAir" Aviation PJSC
Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը) Type(s) of aircraft	BOEING 737-800, BOEING 737-500, BOEING 767- 200, BOEING 737-400, ATR72-500
Հաճախականությունը Frequency	շաբաթական 1 չվերթ 1 flight per week
Երթուղին Air Route	Տյումեն/USTR/-Երևան/UDYZ/-Տյումեն/USTR/ Tyumen/USTR/-Yerevan/UDYZ/-Tyumen/USTR/
Թույլտվության գործողության ժամկետը Permission validity	22/05/2022 մինչև 23/10/2022 22/05/2022 till 23/10/2022

5/5/2022

ՔԱՂԱՔԱՑԱԿԱՆ
ԱՎԻԱՅԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ACTING CHAIR OF CIVIL
AVIATION COMMITTEE
MIHRAN KHACHATRYAN

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN MIHRAN 3308540266



05.05.2022

(տալիս ամսաթիվը)
(date of issue)